ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՄԻՋՆԱԿԱՐԳ հանրակրթական
(ծրագրի անվանումը)

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա № 0154

Սույնով վավերացվում է, որ

«ԱՅԲ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

Թբիլիսյան խճուղի թիվ 11/11
(գտնվելու վայրը)

Թբիլիսյան խճուղի թիվ 11/11
(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Միջնակարգ հանրակրթական
(ծրագրի անվանումը)

հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ (ստորագրությունը) *Ա. Աշոտյան*
(անունը, ազգանունը)

Կ.Տ. «09» *հուլիսի* *2011* թ.

Անժամկետ
(լիցենզիայի գործողության ժամկետը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1763-Հրաման «29» սեպտեմբերի 2022 թ.

«ԱՅԲ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏԱՐՐԱԿԱՆ (ԸՆԴՀԱՆՈՒՐ), ՀԻՄՆԱԿԱՆ (ԸՆԴՀԱՆՈՒՐ) ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ (ԸՆԴՀԱՆՈՒՐ) ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԵՂԵՐԻ ԹՎԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի N 792-Ա/Ք, 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1118-Ա/Ք ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 869-Ա/Ք ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 9-ի N 808-Ն որոշմամբ հաստատված հավելվածներ NN 3-ի, 5-ի և 7-ի 3-րդ և 8-րդ կետերի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի տարրական (ընդհանուր) հանրակրթական ծրագրով սովորողների համակազմի սահմանային 192 տեղերի թիվը ավելացնել 6-ով, և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 23-ի ««Այբ

կրթական հանգույց» հիմնադրամին տարրական հանրակրթական ծրագրով գործունեության լիցենզիա տալու մասին» N 1118-Ա/Ք հրամանի 1-ին կետում՝ «192» թիվը փոխարինել «198» թվով:

2. «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի հիմնական (ընդհանուր) հանրակրթական ծրագրով սովորողների համակազմի սահմանային 180 տեղերի թիվը ավելացնել 36-ով և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2014 թվականի սեպտեմբերի 4-ի ««Այբ կրթական հանգույց» հիմնադրամին միջնակարգ հանրակրթական ծրագրով գործունեության լիցենզիա տալու մասին» N 869-Ա/Ք հրամանի 1-ին կետում՝ «180» թիվը փոխարինել «216» թվով:

3. «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի միջնակարգ (ընդհանուր) հանրակրթական ծրագրով սովորողների համակազմի սահմանային 240 տեղերի թիվը նվազեցնել 42-ով և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի հուլիսի 9-ի ««Այբ կրթական հանգույց» հիմնադրամին միջնակարգ հանրակրթական ծրագրով գործունեության լիցենզիա տալու մասին» N 792-Ա/Ք հրամանի 1-ին կետում՝ «240» թիվը փոխարինել «198» թվով:

4. Սույն հրամանի կատարման կազմակերպումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լիցենզավորման գործակալության պետ Ա. Արշակյանին:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ժ. Անդրեասյանին:

9/29/2022

X

ԱՐԱՅԻԿ ԽԶՄԱԼՅԱՆ

Signed by: KHZMALYAN ARAYIK 3101800129

ԱՐԱՅԻԿ ԽԶՄԱԼՅԱՆ

(պարտականությունները կատարող)